

Այցելություն Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջան

Փետրվարի 20-ին գիրք նվիրելու օրվա առթիվ Ազգային գրադարանի փոխտնօրեն՝ Հասմիկ դազարյանը և գրքափոխանակության արտաքին կապերի և զարգացման ծրագրերի բաժնի վարիչ՝ Անժելա Սամսոնյանը և Խնկո-Ապոր անվան Ազգային մանկական գրադարանի աշխատակիցների հետ համատեղ շրջիկ գրադարանով (բիբլիոթուսով) այցելեցին Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի՝ Ներքին Սասնաշեն և Նոր Արթիկի դպրոցի գրադարաններ: Դպրոցի գրադարաններին նվիրեցին 62-ական միավոր գրականություն, որից 55 միավոր հայերեն, 6 միավոր ռուսերեն և 1 միավոր անգլերեն: